



321.9  
d-50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՂՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 12

3

№ 12

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

ՎԻԼՅԵԼՄ ԼԻԲԿՆԵԽՑ

# ՍԱՐԴԵՐՆ ՈՒ ՃԱՆՃԵՐԸ

Թարգմ. Ե.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

անի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի.

ՄՈՍԿՎԱ—1919.

15073

3269


02 MAY 2013

15 JAN 2013

300 450 uf

26 SEP 2008

1314-40



### Ս Ա Ր Դ Ե Ր Ն Ո Ւ Ճ Ա Ն Ճ Ե Ր Ը

Գերմանական Սոցիալ-դեմոկրատիայի հռչակաւոր առաջնորդի այս յօդաւոր բոլոր երկրների բանւորական խմբաւորումների մօտ մեծ համակրութիւն է գտել:

Այս դրբոյկը Ռուսաստանում էլ հրատարակելու փորձեր եղել են, բայց ամեն անգամ ցարական կառավարութեան արգելքին են հանդիպել:

Այժմ Վիլհելմ Լիբկնեխտի այս յօդաւոր բանւորների լայն խաւերում տարածել տալու համար՝ հնարաւորութիւն կայ:

111

Ձեզնից՝ ամեն մէկն անշուշտ տեսած կլինի այդ կտոր փորով, երկար, ճածուցիկ թաթիկներով թաւոտ միջատին:

Մութ անկիւններում, արևի լոյսից հեռու՝ մեկուսացած, նա հիւսում է իր աւազակային բոյնը: Անզգույշ ճանճն անխուսափելիորէն գալիս այնտեղ և նոյնպիսի անխուսափելիութեամբ էլ կորստի մատնւում:

Նայեցէք ինչպէս անշարժ, առէք բոլորովին անհաղորդակից և անհետաքրքիր դէպի իր շրջապատը, այդ աւազակները մութ անկիւնից ուշի ուշով հետևում և օպատում են մօտեցող որսին:

Յիշեցէք, ինչպիսի դիւային ճարպիկութեամբ ու արագութեամբ է հիւսում նա իր մահաբեր ոտայնը, որը պիտի նախ թող ու անօգնական ճանճին իր մէջ ներս քաշի՝ ու լեռոյ էլ փաթաթի:

Չղւելի կենդանին անդադար կերպով կատարելագոր-  
տում է իր ցանցերը: Ահա նա իրար եռեւից պատրաստում է  
ձուռչին, երկրորդ, երրորդ և չորրորդ թելերը Ահա նա  
ձգում է ըստ երկայնութեան ու լայնութեան թերթերն ու  
իրար հետ կապում: Եւ այդ բոլորն անում է նա միմիայն  
մի նպատակով, որպէսզի զոհը չնայած իր դործ դրած  
յուսակառուր և անհաւատալի ջանքերին՝ չկարողանայ պատ-  
ռոտել այդ ցանցերն ու ազատուել:

Ցանցն արդէն պատրաստ է: Ծուղակն այնպիսի նենգա-  
միտ ու խորամանկ կերպով է լարւած՝ որ նրանից խոյս տա-  
լը համարեա թէ անկարելի է:

Այդ միջոցին, Սարգր իր բնում թաք կեցած՝ համբերու-  
թեամբ կսպասի այնքան՝ մինչև որ քողցից հալածակոն միա-  
միտ ճանճը որեւիցէ սնունդ գտնելու համար կմօտենայ ցան-  
ցին:

Իժբախտը կիրակուր որոնելու համար մի տեղից միւսն  
է թռչում և անսպասելի կերպով ընկնում է խորամանկու-  
թեամբ լարւած թակարդի մէջ ու խճճւում... նրա թափօրն  
արդէն նախորոշւած է...

Սարդն իր դարանից աչալուրջ դիտում է: Նա բոպէս-  
պէս այնտեղից դուրս է պրճնում: Իժբախտ զոհի վրայ  
արիւննուշտ հայեացքներ դցելով, նա դեռ հեռւից կեռում  
է իր թաթիկներն և առանց շտապելու, շրջաններ օնելով՝  
մօտենում նրան:

Եւ ինչո՞ւ շտապել...

Չղւելի կենդանին առաջուց սիւտի, որ այդ ցանցի մէջ  
ընկնողին փրկութիւն չկայ:

Սարգր, իր լայն բաց արած աչքերը լածառ կերպով  
չոելով դժբախտ զոհի վրայ, դանդաղ ու առանց աղմուկի,  
նենգամիտ կերպով հիւսւած մի շարք թելերի միջով թա-  
փնցում է դէպի նրան:

Ճանճն այդ հայեացքից սկսում է դողդողալ և օար-

ստիւի ազդեցութեան տակ քարացում է զգում: Նա անուելի  
վտանգ է տեսնում իր առջին, ամեն կերպ ուղում է փրկելի,  
բայց ուժերն իրան դաւաճանում են և գործ դրած բոլոր  
ջանքերը, իզուր կորչում: Խեղճ և թույլ ճանճը բոպէս առ  
բոպէս, աւելի ևս է խճճւում ճարտար կերպով հիւսւած  
ցանցերում: Թելերի և հանգուցների նորանոր շարքերը հետդ-  
հետէ աւելի են պրկում ճանճին... խիստ ալլանդակ և բազմօ-  
տանի աւաղակը հա՛ մօտենում է:

Մի բոպէս էլ և ահա ուժից ընկած, շնչահեղձ զոհն ամ-  
բողջապէս արիւննարբուի արամադրութեան տակն է: Գարշելի  
հրէշը լայն բաց արած իր մածուցիկ թաթերով ընդգրկում  
ու խեղդում է անպաշտպան ճանճին:

Ճանճը դեռ հողին չի աւանդել... զարդելի հրէշն սկսում  
է շղաճաբար քաշւող մարմնի նիւթերը ծծել... Բայց ինչո՞ւ  
ամբողջ արիւնը մի անգամից ծծի... պէտք է որ հաճույքը  
երկարատե լինի: Եւ վաղրադ կենդանին, արեան ծարաւը մի  
քիչ լազեցնելով թողնում է զոհին, թողնում է՝ որպէսզի մի  
որոշ ժամանակամիջոցից լետոյ՝ էլի վերադառնայ կիսակինդան  
դիակին:

Ցանջանքը երկար է տևում. նա շատ անգամներ է  
վերսկսում, և վերջանում է միայն այն ժամանակ՝ երբ որ  
դժբախտ զոհի մէջ ոչ մի կաթիլ արիւն այլևս չի մնում:

Արիւնխում վամպիրը նրան բոլորովին ուժաթափ է անում,  
նրա ամբողջ արիւնը խճում է և նրան պինդ կերպով պա-  
հում է այնքան ժամանակ՝ որքան որ, դեռ հնարաւորութիւն  
կայ դիակից դուրս քաշելու թէկուզ մի մասնիկ...

Ճանճը մեռնում է...

Սարգր վերցնում նրան իր ոստայնանկից դուրս է  
չալտում որպէս ոչ մի բանի պիտանի չեղող ծղօտի կտոր:  
Գամին էլ իրա հերթին թացնում տանում է նրան: Եւ ամեն  
ինչ վերջանում է...

Սարգր կատարելապէս բաւարարւած ու կուշա՛ վերա-

դառնում է իր ապաստարանը: Վերադառնում է զոհ, զոհ իբր փարպիզած թիւնից, իր գիւտից, ամբողջ աշխարհից, գոյութիւն ունեցող պետութեան ձեռից, կորզերից, որոնց շնորհիւ դործունեայ մարդիկ գեռ ևս կարող են իրանց սեփական հոծոյքի համար մի քիչ էլ ապրել...

Ճանճը, որի վերջին կաթիլ արիւնը քամեցին, որին առանց որևէ ցաւի ու խղճահարութեան օչնչացնում են, որի արիւնով սնուում են, գիւղի և քաղաքի պրոլետարներ, այդ դու՛ր էք:

Ստրկացած ժողովուրդ, այդ դու ևս:

Քրանաչան մշակներ, այդ դուք էք, դործարանային բանւորներ, այդ դուք էք, երկչոտ, դողդողացող մատաղ աղջիկներ և ճնշւած կանաչք, այդ դուք էք, բոլոր դուք ու մենք ենք՝ որ չենք համարձակուում մեզ համար իրաւունքներ պահանջել:

Ճանճը, այդ դու՛ր էք, չար միլիտարիզմի անմեղ զոհեր:

Մի խօսքով, այդ դու՛ր էք բոլոր շահագործւածներ ու զկւածներ, որ երբ համոզուում են, եթէ այլևս ձեր մարմնից ու մկաններից արիւն ծծելու հնարաւորութիւն չկայ՝ հանգիստ սրտով դուրս են շարժուում ձեզ:

Ամբողջ երկրի օրրո ու արտադրողական ուժ բանւորներ, այդ թանճը դուք էք:

Ձեզ միմիայն մի իրաւունք է արւած, այն է, դարշահոտ շնարներում, անտրտունչ, լուռ, կատարեալ անչայտութեան մէջ խղճալի կերպով մեռնելու իրաւունք, ասէք ի շնորհակալութիւն այն բանի՝ որ դուք, և միմիայն դուք կերակրեցիք ձեզ իսկ հարստահարող տէրերին, զգւելի և դարշերի Սարդերին, ձեր սեփական արիւնով, ձեր քրտինքով, ձեր անվերջ աշխատանքով ու ձեր կեանքով կերակրեցիք ու աշակցութիւն ցոյց տւիք նրանց զօրեղացմանը:

Սարդերը, դոքա ամեն զոյնի ու ամեն աստիճանի պարոնները, աղնւականները, կապիտալիստները, հողեօրական-

ները, խաբեբաները, թալանչիներն ու հացկատակներն են:

Սարդերը, դոքա քմահաճոյքներ են՝, որոնցից բոլոր աշխատաւոր գիւղացիներն ու բանւորները աղիողորմ կերպով հարաչում են:

Սարդերը, դոքա հարուստ և անւանի կոչւած մարդկանց ստեղծած օրէնքներն են, օրէնքներ՝ որոնցից տանջւում են բանւորները, գիւղացիները և առհասարակ բոլոր մարդիկ:

Սարդերը, դոքա այն բռնակալներն են՝ որոնք որ ստրկացնում են մեզ:

Սարդերը, դոքա այն բոլոր մարդիկ են, որոնք որ ի հաշիւ ժողովրդի են ապրում, որոնք որ հէնց այդ ժողովրդին օտքերով կօխ են տալիս, ծաղրելով նրա տառապանքներն ու ստրկութեան կապոնքներից ազատադրւելու համար դործ դրած բոլոր ապարդիւն շանքերը:

Ճանճը, դա չքաւոր բանւորն է, որն անհրաժեշտօրէն ստիպւած է կապիտալիստների հնարած ամենախիստ օրէնքներից ենթարկւել, և նա ստիպւած է այդ անելու միմիայն այն պատճառով՝ որ խեղճ է և զրկւած է ապրուստի միջոցներից:

Սարդը, դա մեծ դործարանատէրն է, որն իր ամեն մի բանւորից օրական 5—6 բուբլի փող է աշխատում, իսկ փոխարէնը նրանց 12 ժամայ տաժանակիր աշխատանքից չէտօյ տալիս է 80 կոպէկից սկսած ամենաշատը 1 ռ. 10 կոպէկ քաղցափարձ:

Ճանճը, դա հանքափոր բանւորն է, որն իբր կեանքը փչացնում է ստորերկրեայ խեղդող գազերով լի հանքերում, աչնակից հարստութիւն է դուրս քաշում, բայց դժբախտաբար իրաւունք չունի նրանցից օգտւելու:

Սարդերը, դոքա արդիւնաբերող բնկերութիւնների բաժնետէրերն են, որոնք չեն բաւականանում իրանց բաժնեթղթերի գների կրկնակի և եռապատիկ բարձրացնումով, այլ մշտապէս ցանկանում են կիտել և որքան կարելի է շատ

շահ ստանալ, անխեղճ կերպով թալանելով ուժից ընկած բանւորներին:

Իսկ եթէ այդ բանւորները երբևիցէ համարձակեն աշխատավարձի չաւելում պահանջել, թէկուզ մի քանի կապէկով՝ սարդեր խկոյն («խռովարարներին») հանգստացնելու համար զօրքեր կկանչեն:

Ճանճր, դա այն խիստ դժբախտ մանուկն է, որն ամենամատաղ հասակից ժատնւած է լինում արհեստանոցի, գործարանի և կամ հայրենի չարկի տակ ծանր և հիւժող աշխատանքի, և նա գատապարտւած է դրան բռնի կերպով, որպէսզի կարողանայ իր ընտանիքին աղատել մշտական քաղցից տառաջացող անխուսափելի մահից:

Սարդերը, դոքա այն խեղճ ծնողները չեն, որոնք անելանելի դուրթիւնից դուրս գալու համար սախլւած են գոհել նոյնիսկ իրանց երեխաներին:

Սարդերը դոքա կապիտալիզմի ստեղծած ժամանակակից զգւելի կարգերն են, ժամանակակից անսիրտ պաշտանները, որոնք հարկադրում են բանւորներին վերաբերել իրանց երեխաների հետ այդ կերպ, հակառակ այն բնածին սիրոյ զգացմունքին՝ որ նոքա տաժում են դէպի իրանց երեխաները:

Ճանճր, դա ժողովրդի ծնունդն է, որ ցանկանում է իր բաժին հացը պատուով ձեռք բերել, բայց հարկադրւած է, գործարանատիրոջ, վերատեսչի և ուրիշների անառակ ցանկութիւններին բաւարարութիւն տալ, իսկ այդ լրբերը նրան մշտապէս օդտազործելուց չետոյ, երբ որ նա չղիանում է, խաչտառակութիւնից խուսափելու համար, նրան գործարանից դուրս են շարտում:

Սարդը, դա շահել ու դժուժ հաքուստն է, որն անցկենալիս զայլթակղեցնում է մաքուր աշխատաւոր կանանց, քաշում է նրանց դէպի անառակ կենսքը և ծի առանձին պատիւ հոռւում իրա համար, բոս կարելուին շատ անպատ-

ուութեան ենթարկելն այդ անպաշտպան կարիքաւոր կանանց:

Ճանճր, այդ դու ես խաղաղ հողագործ զիւղացի, այդ դու ես՝ որ նահատիզ քրտինքով մշակում ես աղնւականի հողը, հաց ես ցանում, որի հունձքը քեզ չի պատկանում, պտուղներ ես հաօցնում, որոնց ազահ ու բնկուշտ կալւածատէրն է տիրանում:

Սարդերը, դոքա կալւածատէրերն ու մեծ հողատէրերն են, որոնք ստիպում են իրանցից հողը կապալով վերցնողներին, կէս մասերով վարձողներին, մշակներին և օրավարձով աշխատողներին աշխատել մինչև ուժերի քամւելը. դոքա այն մարդիկն են, որոնք ամեն սարի, աշխատաւորների ուժերից վեր գործի փոխարէն բարձրացնում են հողավարձը և իշեցնում աշխատավարձը, որպէսզի նոխութեան մէջ խեղդւեն, յաւիտենական հանդիստ վայելն և ուրիշի աչքերին էլ փոշի փչեն:

Ճանճր, դոքա բոլոր կարիքից ընկճւածները, ստրկացածները, հոգեպէս վերաւորւածներն ու ստորացածներն են:

Սարդերը, դա հարուստների քմահաճոյքը, դանազան ձևերով երևան եկող գողութիւնն ու բռնակալութիւնն է:

Ճանճր, այդ մենք, բոլոր խեղճ աշխատաւորներս ենք, որ օրօրոցից սկսած դատապարտւած ենք եկեղեցու խորանի առջև դողդողալ, խոնարհ կերպով ծռել մեր վիզը քահանաների առջև, հաւատալ նոցա ցնդաբանութիւններին և վախենալ դժոխքի յաւիտենական տանջանքի սպաւնալիքներից:

Ճանճր, այդ բոլորը դուք էք, որ այլադաւանների հետ երկզառակութեան և թշնամանքի մտնելով՝ ուրախութիւն էք պատճառում ոսկու մէջ թաւալող եպիսկոպոսներին:

Սարդերը, դրանք քահանաներն ու կուսակրօններն են, որոնք մթնացնում են մարդկանց բանականութիւնը, թունաւորում են հաւատացող մարդու հոգին, կրօնի անունից առաջարկում են ստրկական խոնարհութիւն ցոյց տալ դէպի այս

աշխարհի ուժեղները, և նորովուհի են այն խեղճ աշխատա-  
ւորներին՝ որոնք որ, թէկուզ թեթեւ կուլ ևն ուզում  
մղել բանւորների արիւնք խնդրների դէմ իրանց դրու-  
թիւնը մի քիչ բարելաւելու նպատակով:

Այդ սարգերն առաջ իրանց ցանցերը կալածափայտերու  
էին ձգում, իսկ այժմ իրանց ոստայնանկները դնում են ար-  
դիւնարերական կենտրոններում:

Այդ արիւնուռւտ յափշտակիչներն սիրած վայրերն այժմ  
գործարանաշատ քաղաքներն են: Նրանք սիրում են իրանց  
բոնքը դնել նաև շէնքերում և հեռաւոր գիւղերում՝ որտեղ  
որ կարիքաւոր մարդկանց շահագործելու հնարաւորութիւն  
կայ:

Այնտեղ, ուր բանւոր ու դիւղացի մշակք ապահովւած  
չեն, որտեղ դիւղացին ստիպւած է պարտքեր անել, այնտեղ  
արիւնուռւտ յափշտակիչ կապիտալիստը հաստատում է իր  
թաղաւորութիւնը: Եւ ամեն տեղ, համարեա ամեն ուրէք  
դուք կգտնէք հարուստների միջոցով տեղաւորւած ոստայնանկ-  
ներ, որոնց մէջ անօդնական, չկազմակերպւած ու առանց հա-  
ռաչանքի մեռնող բանւորներն են մաքառում:

Ո՞րքան հողեցունց պառակերներ են յայտնի այդ բազ-  
մարարեան սարսափելի կուլին, որ տեղի է ունեցել թոյլ  
ճանճերի և արիւն խնդր յափշտակիչ սարգերի միջև: Իսկն  
ասած՝ դա սարսափելի տառապանքների արիւնով ու սար-  
սափով լի պատմութիւնն է:

Բայց ինչու ենք մեր հայեացքն ուղղում դէպի անց-  
եալը...

Աւելի լաւ է խօսել ներկայի և ապագայի մասին:  
Մտեանք հենց անմիջական կերպով այն կուլին, որ  
մեր օրերում մղւում է օոսկալի կերպով սարգերի ու ճան-  
ճերի միջև:

Քննենք, տեսնենք նա ի՞նչ պայմաններում է տեղի ու-  
նենում: Ուսումնասիրենք ոստայնանկների խորամանկօրէն

հիւսւած ցանցերը և քննենք կապիտալիստների սարգային  
նենգամտութիւնները:

Բայց նրանց հասկանալու համար մի նախապայման է  
հարկաւոր, անհրաժեշտ է որ բոլոր չքաւորները նախօրօք  
միանան և մի կուռ ամբողջութիւն կազմեն:

Ձուկ-ջուկ կանգնած անուժներ և առանձնակի մնացած  
թոյլեր, եկէ՛ք միացնենք մեր ուժերը, որպէսզի կարողանանք  
նենգամիտ կապիտալիստների մեր կորստեան համար հիւսած  
և մեզ շրջապատող ցանցերը կտրտել:

Կորչեն մեզ կապկպող շղթաները: Դուքա շարտենք մեր  
արիւնք խնդրներին իրանց բներից:

Գիտակցութեան բերենք ամեն մի աշխատաւորի, որ-  
պէսզի դարձնի արիւն խնդր սարգը այլևս չկարողանայ կա-  
տարել իր մութ դօրծերը: Դուք իման՞ում էք աշխատաւոր-  
ներ, եթէ դուք միմիայն կամենալիք՝ անյաղթելիներ կլինէիք:

Կասկածից դուքա է, որ սարգերը մեր օրերում ուժեղ  
են, բայց չէ՞ որ նօքա շատ քիչ են:

Իսկ դուք ճանճերը, որ ջուկ-ջուկ վերցրած շատ թոյլ էք  
և ոչ մի աղդեցութիւն չունէք, լիշեցէք որ դուք թուով՝ ան-  
համար էք, և այդ անհամարութեան մէջ է մեր ուժն ու  
գորութիւնը:

Եթէ դուք բոլորդ միանալիք, ապա թեւերի մի թա-  
փահարուժով, մի շարժումով կպատառէիք այն ոստայնանկնե-  
րը, որոնք ձեզ խեղդում են, կպատառէիք այն ցանցերը,  
որոնց մէջ դուք առանձին-առանձին անօգնական կերպով  
դէս ու դէն ընկնում և վերջանում էք, և որոնց մէջ ընկում  
էք դուք միմիայն յարակալ քաղցի ու կարիքի հալածանքից:

Եթէ դուք ուղենալիք միանալ՝ ապա լի ու լի հնարա-  
ւորութիւն կստանալիք միանգամից վերջ տալու աղաղակող  
կարիքին ու ստրկութեանը, բայց ի հարկէ եթէ միայն դուք  
այդ ցանկանալիք...

Դէ, սովորեցէ՛ք վերջապէս...



«ԿԱՐՄԻՐ ԴՐՕՇՁԿ»

Օրգան Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեի.

№ 1. 1) Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան կենտրոնական կոմիտեի կողմ: 2) Մալխի մեկը: 3) ԳՐԻՎԱՐԴ՝ Ազուր Ս. Շահումեանի անուն: 4) ՀՐԱՆՏ՝ Անդրկովկասի արզի կացութիւնը: 5) \* \* \* Ի՞նչ են տել անդրկական իմպերիալիստները հայ ժողովրդին: 6) Մալխի մեկի առիթով: 7) Կուսակցական կեանք: 8) Արտասահման:

№ 2. 1) Առաջնորդը, ՀԱՅԿՈՒՆԻ՝ Բազել պրոլետարիատի հրաշամանուկը: 2) ՎԷՆՆ ՏԵՐԵԱՆ՝ Անտոնով ընկեր... 3) ԱԹԱԲԵԿԵԱՆ՝ Ս. Շահումեանը որպէս ժողովրդականացնող թեորեորիկ և յեղափոխական ծարրիզմը Կովկասի պրոլետարիատի մէջ կիրառող: 4) Ս. Մ.՝ Սիրելի Ստեփանի հետ վերջին անգամ: 5) ՎԷՆՆ ՏԵՐԵԱՆ՝ Գաղէ: 6) Վ. Տ.՝ Երեք հաղիպում: 7) ԲԱՆԱՍԻՐԵԿԱՆ՝ Ա. ՅՈՎՀԷՆՆԻՍԵԱՆ՝ Առ. Շահումեանի տեղը հայ բանւորական շարժման մէջ: 8) ՄԱՄՈՒԼ, ՎԱՐԳԵՍ՝ «Անկախ, ազատ Հայաստան»: 9) Կուսակցական կեանք: 10) Անդրկովկաս:

№ 3. 1) Առաջնորդը՝ Կոչակ և իմպերիալիզմ: 2) ԼԻՆՉ՝ Բրեստ և Վերսալ: 3) ՎԱՐԴԳԵՍ՝ Զգոյշ, խաբուծ են ձեռ ընկերներ: 4) ԼԵՆԻՆ՝ Երբոր Ինտերնացիոնալի ու իր տեղը պատմութեան մէջ: 5) Ա. ԿԱՐԻՆԵԱՆ՝ «Անկախ Հայաստան»: 6) Հայաստան: 7) Անդրկովկաս: 8) Կուսակցական կեանք: 9) Արտասահման:

№ 4. 1) Առաջնորդը՝ Արեւուտը և Արեւելը: 2) Ա. ԱԹԱԲԵԿԵԱՆ՝ Համաշխարհային յեղափոխութիւնը և Արեւելը: 3) Ս. ՄԱՐԴԱՐԵԱՆ՝ Զենքը բանւորի ձեռքին: 4) Ն. ԼԵՆԻՆ՝ Երբոր Ինտերնացիոնալի ու իր տեղը պատմութեան մէջ: 5) Ա. ԿԱՐԻՆԵԱՆ՝ «Անկախ Հայաստան»: 6) ՄԱՄՈՒԼ՝ Տոմսոնի Հրամանը: 7) Հայաստան: 8) Անդրկովկաս: 9) Թիւրքիա: 10) Արտասահման: 11) Կուսակցական կեանք: Յայտարարութիւն:

№ 5. 1) Առաջնորդը՝ Դէնիկին: 2) \* \* \* Բողա Լիւբոմիրով: 3) Գ. ՀԱՅԿՈՒՆԻ՝ Պրոլետարական յեղափոխութիւնը և Հայաստանի կոմմունիստական կուսակցութիւնը: 4) ԼԻՆՉ՝ Հայաստանի կառավարութիւնն ու հայ ժողովուրդը: 5) ԳՐԻՎԱՐԴ՝ Բաժանի, որ տիրեա: 6) ԲԱՆՈՒՐ ՀԱՅԿ՝ Կարմիր բանակ: 7) Ա. ԿԱՐԻՆԵԱՆ՝ «Անկախ Հայաստան»: 8) Յ. Ա.՝ Խորհրդային հանրապետութիւնների միացումը: 9) Հայաստան: 10) Անդրկովկաս: 11) Արտասահման: 12) Թիւրքիա: 13) Կուսակցական կեանք:

№ 6. 1) Առաջնորդը՝ Միջազգային ղեակցիան: 2) ՀՐԱՆՏ՝ Յեղափոխական Վնդրիան: 3) Գ. ՀԱՅԿՈՒՆԻ՝ Պրոլետարական յեղափոխութիւնը և Հայաստանի կոմմունիստական կուսակցութիւնը: 4) Կարմիր Աստղը: 5) ԲԱՆՈՒՐ ՀԱՅԿ՝ Կարմիր բանակ: 6) Ա. ԿԱՐԻՆԵԱՆ՝ «Անկախ Հայաստան»: 7) ՄԱՄՈՒԼ՝ ՎԱՐԳԵՍ՝ Դաշնակցութեան նոր կուրսը: 8) Հայաստան: 9) ԱՆԴՐԿՈՎԿԱՆ: 10) Արտասահման: 11) Թիւրքիա:

№ 7. 1) Առաջնորդը՝ Միջազգային յեղափոխութիւնը: 2) ԼԻՆՉ՝ Հայաստանի նացիոնալիստների գործելակերպը: [Redacted] 4) Գ. ՀԱՅԿՈՒՆԻ՝ Պրոլետարական յեղափոխութիւնը և Հայաստանի կոմմունիստական կուսակցութիւնը: 5) Ա. ԿԱՐԻՆԵԱՆ՝ «Անկախ Հայաստան»: 6) Դրբի ժամանակաւոր բանւոր-գիւղացիական կառավարութեան յայտարարութիւնը: 7) Անդրկովկաս: 8) Արտասահման: 9) Թիւրքիա: 10) Կուսակցական կեանք:



